

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N:708 հրամանով

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

1. Ընդհանուր դրույթներ
<p>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ (այսուհետ՝ Վարչության պետ), ծածկագիրը՝ 98-1.6-Ղ4-1</p> <p>1.2. Ենթակա և հաշվետու է Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին (այսուհետ՝ Մարզպետին)</p> <p>1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետի տեղակալը, Վարչության բաժինների պետերը:</p> <p>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Վարչության բաժինների պետերից մեկը:</p> <p>1.5. Աշխատավայրը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Գ.Նժդեհի 16</p>
2. Պաշտոնի բնութագիրը
<p>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</p> <p>1. Ապահովում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի (այսուհետ՝ Մարզ) տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման ամենամյա աշխատանքային ծրագրի նախագծի կազմման աշխատանքները և ծրագրով նախատեսված հսկողության իրականացումը.</p> <p>2. Ապահովում է Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված և Մարզպետարան առաքված որոշումների ուսումնասիրության և իրավաչափության որոշման աշխատանքները.</p> <p>3. Ապահովում է Մարզի խորհրդի նիստերի օրակարգերի նախագծերի ձևավորման, նիստերի հրավիրման և արձանագրման աշխատանքները.</p> <p>4. Ապահովում է պետական ծրագրերով նախատեսված Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների</p>

վերապատրաստման աշխատանքների կատարման նկատմամբ հսկողությունը և արդյունքների ամփոփումը.

5. Ապահովում է Մարզի համայնքապետարաններից ստացված աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և պաշտոններից ազատված անձանց վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրման և համայնքային ծառայողների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում մուտքագրման աշխատանքները.

6. Ապահովում է Մարզի համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների անցկացման մեթոդական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու աշխատանքները.

7. Ապահովում է համայնքային ծառայության վերաբերյալ առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման աշխատանքները.

8. Ապահովում է համայնքապետարանների աշխատակազմերի վերակազմակերպման, կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) և լուծարման ժամանակ համայնքային ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ աշխատանքները:

9. Ապահովում է համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման մեթոդական ղեկավարման և վերահսկման աշխատանքները.

10. Ապահովում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, դադարման վերաբերյալ առաջարկության նախագծի նախապատրաստման աշխատանքները.

11. Ապահովում է բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու աշխատանքները:

12. Ապահովում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների իրականացման հարցերով խորհրդատվության տրամադրման աշխատանքները.

13. Ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների նշանակման վերաբերյալ Մարզպետի որոշման նախագծի կազմման, Մարզում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների նախապատրաստմանը, կազմակերպմանը և անցկացմանն աջակցություն ցուցաբերելու աշխատանքները.

14. Ապահովում է Մարզի համայնքների ղեկավարների ու ավագանիների լիազորությունների ստանձնման և համայնքների նախորդ ղեկավարների ու ավագանիների լիազորությունների ժամկետների ավարտման նկատմամբ հսկողությունը.

15. Ապահովում է Մարզի տարածքում զինապարտների հաշվառման, գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ անցկացվող խորհրդակցությունների նախապատրաստական աշխատանքները.

16. Ապահովում է Մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով ոստիկանության և ազգային անվտանգության ոլորտի պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին Մարզպետի իրավասության սահմաններում տրվող հանձնարարականների և կարգադրությունների նախագծերի կազմման աշխատանքները.

17. Ապահովում է Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի պետական կառավարման մարմնի տարածքային ստորաբաժանման

ղեկավարին Մարգպետի իրավասության սահմաններում տրվող հանձնարարականների և կարգադրությունների նախագծերի կազմման աշխատանքները.

18. Ապահովում է Մարզում այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացման և վերահսկողության աշխատանքները.

19. Մասնակցում և ապահովում է Վարչության մասնակցությունը Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար կազմակերպվող աշխատանքներին.

20. Մասնակցում և ապահովում է Վարչության մասնակցությունը Մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքներին, հանրապետական համապատասխան ծրագրերով նախատեսված, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքների վերացման աշխատանքներին.

21. Ապահովում է մարզային գորակոչային հանձնաժողովի գործունեության ապահովման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները, տարկետման տրամադրման նպատակով մարզային գորակոչային հանձնաժողովին ներկայացված գորակոչիկների անձնական գործերի ուսումնասիրումը, համապատասխան որոշումների և եզրակացությունների նախագծերի կազմումը.

22. Մասնակցում և ապահովում է Վարչության մասնակցությունը պարտադիր զինվորական ծառայության գորակոչի, պահեստագորային պատրաստության միջոցառումների և գորահավաքային գորակոչի իրականացման, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացին, ինչպես նաև գորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին.

23. Մասնակցում և ապահովում է Վարչության մասնակցությունը տարածքային կառավարման մակարդակում պաշտպանության ոլորտի Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության իրականացման ապահովմանը: Ապահովում է Մարզում տեղակայված զինվորական ստորաբաժանումների հետ Մարգպետարանի համագործակցությունը.

24. Ցուցաբերում է աջակցություն Մարզի տարածքում գտնվող սահմանապահ զորքերին՝ պետական սահմանի պահպանության գործում: Միջոցներ է ձեռնարկում Մարզի սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտի պատասխանատու ստորաբաժանումների, Մարգպետարանի և սահմանապահ զորքերի համագործակցված աշխատանքների ապահովման ուղղությամբ.

25. Ապահովում է Մարգպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և Մարգպետարան վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքները.

26. Մասնակցում և ապահովում է Վարչության մասնակցությունը Մարգպետարանի, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.

27. Ապահովում է Վարչության խնդիրներից բխող այլ իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև

դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքները.

28. Համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Մարզպետարանի գլխավոր քարտուղարին Վարչության քաղաքացիական ծառայողների բացակայության դեպքում նրանց փոխարինելու մասին.

29. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին է ներկայացնում Վարչության ծրագրերը.

30. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

31. Վարչության առջև դրված գործառնությունների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև Մարզպետարանի գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների:

Իրավունքները՝

- Անհրաժեշտության դեպքում տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալ տեղեկություններ, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման ամենամյա աշխատանքային ծրագրի նախագծի կազմման աշխատանքների և ծրագրով նախատեսված հսկողության լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենսդրությանը հակասող որոշումները, գործողությունները և անգործությունը դատական կարգով բողոքարկելու վերաբերյալ Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված և Մարզպետարան առաքված որոշումների ուսումնասիրության և իրավաչափության որոշման աշխատանքները լիարժեք ու արդյունավետ իրականացնելու նպատակով, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենսդրությանը հակասող որոշումները, գործողությունները և անգործությունը դատական կարգով բողոքարկելու վերաբերյալ Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Մարզի խորհրդի նիստերի անցկացման նախապատրաստման նպատակով, Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններից, համապատասխան պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից և այլ կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր: Մարզի խորհրդի օրակարգային հարցերի վերաբերյալ Մարզպետին ներկայացնել առաջարկություններ.
- Պետական ծրագրերով նախատեսված Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման աշխատանքների կատարման նկատմամբ հսկողության և արդյունքների ամփոփման ապահովման նպատակով, տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր, փաստաթղթեր.
- Մարզի համայնքապետարաններից աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և պաշտոններից ազատված անձանց վերաբերյալ ստանալ անհրաժեշտ

տեղեկություններ: Տեղեկությունների ուսումնասիրման և համայնքային ծառայողների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում մուտքագրման աշխատանքները լիարժեք ու արդյունավետ իրականացնելու նպատակով, Մարզպետին ներկայացնել առաջարկություններ.

- Մարզի համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների անցկացմանն աջակցելու նպատակով, համայնքապետարաններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր և ներկայացնել առաջարկություններ.
- Համայնքային ծառայության վերաբերյալ առաջարկությունների, դիմումների ու բողոքների վերաբերյալ, տեղական ինքնակառավարման մարմիններից ու քաղաքացիներից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.
- Համայնքապետարանների աշխատակազմերի վերակազմակերպման, կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) և լուծարման ժամանակ համայնքային ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ Մարզպետին ներկայացնել առաջարկություններ.
- Համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման մեթոդական ղեկավարմանը և վերահսկմանն առնչվող հարցերի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր, Մարզպետին ներկայացնել առաջարկություններ.
- Համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, դադարման վերաբերյալ առաջարկության նախագծի նախապատրաստման աշխատանքներն ապահովելու նպատակով, համապատասխան համայնքապետարանից ստանալ լրացուցիչ տեղեկություններ, փաստաթղթեր, Մարզպետին ներկայացնել առաջարկություններ.
- Բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու նպատակով, համապատասխան համայնքապետարանից ստանալ լրացուցիչ տեղեկություններ, փաստաթղթեր, Մարզպետին ներկայացնել առաջարկություններ.
- Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց լիազորությունների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Մարզում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների նշանակման համար Մարզպետի որոշման նախագծի կազմմանն առնչվող հարցերի վերաբերյալ, համայնքապետարաններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր, Մարզպետին ներկայացնել առաջարկություն.
- Մարզի համայնքների ղեկավարների ու ավագանիների լիազորությունների ստանձնման և համայնքների նախորդ ղեկավարների ու ավագանիների լիազորությունների ժամկետների ավարտման նկատմամբ հսկողությունն ապահովելու նպատակով, համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովներից և համայնքապետարաններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, իրավական ակտեր, փաստաթղթեր.
- Մարզի տարածքում զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ անցկացվող խորհրդակցությունների նախապատրաստման նպատակով, համապատասխան պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ ապահովել նախնական քննարկումներ, ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր, փաստաթղթեր: Խորհրդակցությունների օրակարգային հարցերի վերաբերյալ Մարզպետին ներկայացնել

առաջարկություններ.

- Մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման համար ոստիկանության և ազգային անվտանգության ոլորտի պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին Մարզպետի իրավասության սահմաններում տրվող հանձնարարականների և կարգադրությունների նախագծերի կազմման նպատակով, համապատասխան պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ: Մարզպետի կողմից ընդունվող իրավական ակտերով և այլ փաստաթղթերով կարգավորվող հարաբերությունները լիարժեք և արդյունավետ ապահովելու նպատակով Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի պետական կառավարման մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարին Մարզպետի իրավասության սահմաններում տրվող հանձնարարականների և կարգադրությունների նախագծերի կազմման նպատակով, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի պետական կառավարման մարմնի տարածքային ստորաբաժանման ներկայացուցիչներից, ինչպես նաև Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր: Մարզպետի կողմից ընդունվող իրավական ակտերով ու այլ փաստաթղթերով կարգավորվող հարաբերությունները լիարժեք և արդյունավետ ապահովելու նպատակով Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու համապատասխան վայրերի (կազմակերպությունների) ներկայացուցիչներից ստանալ այլընտրանքային աշխատանքային ծառայողի հաճախումների, կարգապահության և ծառայությանն առնչվող այլ տեղեկություններ, նյութեր: Այդ կազմակերպությունների ղեկավարներին, այլընտրանքային աշխատանքային ծառայության անցած քաղաքացիներին, պատասխանատու այլ անձանց մասնակցությամբ հրավիրել աշխատանքային քննարկումների, առաջարկություն ներկայացնել արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ: Ծառայության լիարժեք և արդյունավետ կազմակերպման ու վերահսկողության իրականացման նպատակով, Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների իրականացման լիարժեք և արդյունավետ ապահովման նպատակով, Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները լիարժեք և արդյունավետ իրականացնելու նպատակով, Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Տեղական ինքնակառավարման մարմիններից, զինվորական կոմիսարիատներից, ուսումնական հաստատություններից և այլ կազմակերպություններից ստանալ գորակոչիկներին տարկետման տրամադրմանն առնչվող տեղեկություններ, նյութեր, փաստաթղթեր: Մարզային գորակոչային հանձնաժողովի օրակարգային հարցերի վեաբերյալ Մարզպետին (մարզային գորակոչային հանձնաժողովի նախագահին) ներկայացնել առաջարկություններ.
- Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի, պահեստագորային պատրաստության միջոցառումների և գորահավաքային գորակոչի իրականացման, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացի, ինչպես նաև գորահավաքային

նախապատրաստության շրջանակներում անցկացվող ուսումնավարժական հավաքների ու պարապմունքների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով, Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

- Տարածքային կառավարման մակարդակում պաշտպանության ոլորտի Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության իրականացման աշխատանքների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր: Մարզում տեղակայված զինվորական ստորաբաժանումների հետ Մարզպետարանի համագործակցությունը լիարժեք և արդյունավետ ապահովելու նպատակով Մարզպետին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Պետական սահմանի պահպանության գործում Մարզի տարածքում գտնվող սահմանապահ զորքերին աջակցություն ցուցաբերելու նպատակով, Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններից, ոլորտին առնչվող պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից, ինչպես նաև սահմանապահ զորքերից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր: Քննարկվող հարցերի վերաբերյալ Մարզպետին ներկայացնել առաջարկություններ.
- Գրությունների, դիմումների, բողոքների առաջարկությունների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններից, համապատասխան այլ մարմիններից ու քաղաքացիներից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, ապահովել բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկումներ, Մարզպետին ներկայացնել առաջարկություններ այլ ստորաբաժանումներից համապատասխան մասնագետների ներգրավման վերաբերյալ.

Պարտականությունները՝

- Մարզպետին ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման ամենամյա աշխատանքային ծրագրի, Մարզպետի որոշումների նախագծերը, ապահովել հսկողության իրականացման և արձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ ստացված տեղեկությունների ամփոփման աշխատանքները: Կատարված աշխատանքների վերաբերյալ Մարզպետին ներկայացնել նաև զեկուցագրեր, գրություններ, արձանագրություններ, տեղեկանքներ.
- Ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված և Մարզպետարան առաքված որոշումների՝ օրենսդրության համապատասխանությունը որոշելու աշխատանքները: Ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ, համայնքների ղեկավարներին ներկայացնելու նպատակով, Մարզպետին ներկայացնել առարկությունների, առաջարկությունների նախագծեր: Ապահովել ոչ իրավաչափ որոշումների՝ սահմանված ժամկետում փոփոխելու վերաբերյալ ստացված տեղեկությունների ամփոփման աշխատանքները: Կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել նաև գրությունների նախագծեր, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր.
- Մարզպետին ներկայացնել Մարզի խորհրդի նիստերի օրակարգերի նախագծերը, ստացված տեղեկությունների և նիստերի կազմակերպական հարցերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություններ, ապահովել նիստերի արձանագրումը: Կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել նաև գրությունների նախագծեր, տեղեկանքներ, արձանագրություններ և այլ փաստաթղթեր.
- Ապահովել տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված հայտերի ամփոփումը, դրանց հիման վրա վերապատրաստվող անձանց ցուցակների կազմումը և խմբերի կազմավորումը: Վերապատրաստման գործընթացի նկատմամբ ապահովել հսկողություն՝

լիազոր մարմնի կողմից ներկայացված չափանիշներին համապատասխան իրականացնելու նպատակով: Ամփոփել վերապատրաստման արդյունքները և լիազոր մարմին ներկայացնելու նպատակով Մարզպետին ներկայացնել գրությունների նախագծեր, տեղեկատվություններ և այլ փաստաթղթեր.

- Ապահովել Մարզի համայնքապետարաններից ստացված աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և պաշտոններից ազատված անձանց վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրման և համայնքային ծառայողների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում մուտքագրման աշխատանքները: Համայնքային ծառայության պաշտոնների նշանակմանը և ազատմանն առնչվող ոչ իրավաչափ իրավական ակտերի վերաբերյալ, համայնքների ղեկավարներին ներկայացնելու նպատակով, Մարզպետին ներկայացնել առարկություններ, առաջարկություններ: Ապահովել ոչ իրավաչափ իրավական ակտերի՝ սահմանված ժամկետում փոփոխելու վերաբերյալ ստացված տեղեկությունների ամփոփման աշխատանքները: Կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել նաև գրությունների նախագծեր, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր.
- Ապահովել Մարզի համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների անցկացման մեթոդական և խորհրդատվական աջակցությունը, ապահովել մրցույթների հայտարարությունների հրապարակայնությունը: ապահովել Մարզի համայնքապետարաններում համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում Մարզպետարանի ներկայացուցիչների ընդգրկման աշխատանքները: Ամփոփել մրցույթների և ատեստավորումների արդյունքները և լիազոր մարմին ներկայացնելու նպատակով, Մարզպետին ներկայացնել գրությունների նախագծեր, տեղեկատվություններ և այլ փաստաթղթեր.
- Ապահովել համայնքային ծառայության վերաբերյալ առաջարկությունների, դիմումների ու բողոքների ուսումնասիրության աշխատանքները, որոնց արդյունքների վերաբերյալ Մարզպետին ներկայացնել գրությունների նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ և այլ փաստաթղթեր.
- Ապահովել համայնքապետարանների աշխատակազմերի վերակազմակերպման, կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) և լուծարման ժամանակ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերում փոփոխություններ կատարելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիազոր մարմինն դիմելու վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի կազմման մեթոդական և խորհրդատվական աջակցությունը: Լիազոր մարմին ներկայացնելու նպատակով, Մարզպետին ներկայացնել գրությունների նախագծեր, առաջարկություններ, հիմնավորումներ, եզրակացություններ և այլ փաստաթղթեր.
- Ապահովել համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման մեթոդական ղեկավարումը և վերահսկումը, որի արդյունքում Մարզպետին ներկայացնել գրությունների նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ.
- Ապահովել սահմանված ժամկետում և կարգով համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, դադարման վերաբերյալ առաջարկության նախագծի նախապատրաստման աշխատանքները, լիազոր մարմին ներկայացնելու նպատակով, Մարզպետին ներկայացնել գրությունների նախագծեր, անհրաժեշտ այլ փաստաթղթեր.
- Ապահովել սահմանված ժամկետում և կարգով բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ Մարզպետի որոշման նախագծի կազմման աշխատանքները.

- Տեղական ինքնակառավարման մարմինների պահանջով տրամադրել խորհրդատվություն և տալ պարզաբանումներ՝ իրենց սեփական լիազորությունների և պետության պատվիրակած լիազորությունների իրականացման հարցերով.
- Ապահովել ընտրական գործընթացների նախապատրաստման և անցկացման հետ կապված աշխատանքները՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթներին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցներին համապատասխան ապահովելու ուղղությամբ.
- Ապահովել օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Մարզի համայնքների ղեկավարների ու ավագանիների լիազորությունների ստանձնման և համայնքների նախորդ ղեկավարների ու ավագանիների լիազորությունների ժամկետների ավարտման նկատմամբ հսկողության իրականացումը, համապատասխան տեղեկությունների հաշվառումն ու ամփոփումը.
- Մարզպետին ներկայացնել Մարզի տարածքում զինապարտների հաշվառման, գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ անցկացվող խորհրդակցությունների օրակարգերի նախագծեր, ստացված տեղեկությունների ուսումնասիրությունների և խորհրդակցությունների կազմակերպման հարցերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություններ, ապահովել անցկացվող խորհրդակցությունների և աշխատանքային քննարկումների արձանագրումը.
- Ոստիկանության և ազգային անվտանգության ոլորտի պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ստացված և Մարզպետի կողմից հաստատվող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի ուսումնասիրում և եզրակացությունների ներկայացում: Սահմանված ժամկետներում Մարզպետի հաստատմանը ներկայացնում է ստացված և (կամ) Վարչության կողմից նախապատրաստված իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերը.
- Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի պետական կառավարման մարմնի տարածքային ստորաբաժանումից ստացված և Մարզպետի կողմից հաստատվող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի ուսումնասիրում և եզրակացությունների ներկայացում: Սահմանված ժամկետներում Մարզպետի հաստատմանը ներկայացնում է ստացված և (կամ) Վարչության կողմից նախապատրաստված իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերը.
- Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու համապատասխան վայրերի (կազմակերպությունների) ղեկավարներին տրամադրել անհրաժեշտ մեթոդական աջակցություն: Իրականացնել պատահական շրջայցեր Մարզում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու համապատասխան վայրեր (կազմակերպություններ)՝ ինչպես այլընտրանքային աշխատանքային ծառայողի, այնպես էլ ծառայության վայրերի (կազմակերպությունների) ղեկավարների կողմից իրենց պարտականությունները լրիվությամբ կատարելու փաստը պարզելու նպատակով: Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողով ներկայացնելու նպատակով, Մարզպետին ներկայացնել տեղեկություններ՝ ծառայության կազմակերպման և վերահսկողության, այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու նոր վայրերի, նոր և (կամ) ազատված աշխատատեղերի ու դրանց քանակի, ինչպես նաև աշխատանքի տեսակների և բնույթի մասին.
- Մասնակցել Մարզպետի հանձնարարականներով, համապատասխան պլաններով ու ծրագրերով նախատեսված՝ Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների իրականացման աշխատանքներին: Մարզպետին

ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագրեր, տեղեկություններ և այլ փաստաթղթեր.

- Մասնակցել Մարզպետի հանձնարարականներով, համապատասխան պլաններով ու ծրագրերով նախատեսված՝ արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման, օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացման, տեղական ինքնակառավարման մարմիններին ու բնակչությանը քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին ներգրավման աշխատանքներին: Որպես մարզային տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալ իրականացնել մարզային պլաններով նախատեսված աշխատանքներ: Մարզպետին ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագրեր, տեղեկություններ և այլ փաստաթղթեր.
- Ապահովել մարզային գորակոչային հանձնաժողովի նիստերի հրավիրումն ու արձանագրումը: Ապահովել տարկետման տրամադրման նպատակով գորակոչիկների անձնական գործերի նախնական ուսումնասիրում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության և ռազմական ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մարզպետին (մարզային գորակոչային հանձնաժողովի նախագահին) ներկայացնել ստացված տեղեկությունների, կատարված ուսումնասիրությունների, նիստերի ապահովմանն առնչվող հարցերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, մարզային գորակոչային հանձնաժողովի նիստերի օրակարգերի և հանձնաժողովի որոշումների ու եզրակացությունների նախագծեր, ինչպես նաև հանձնաժողովի որոշումներն ու եզրակացությունները Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն ներկայացնելու նպատակով կազմված գրությունների նախագծեր և այլ փաստաթղթեր.
- Մասնակցել Մարզպետի հանձնարարականներով, համապատասխան պլաններով ու ծրագրերով նախատեսված՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչի, պահեստագորային պատրաստության միջոցառումների և գորահավաքային գորակոչի իրականացման, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացի, ինչպես նաև գորահավաքային նախապատրաստության շրջանակներում անցկացվող ուսումնավարժական հավաքների ու պարապմունքների աշխատանքներին: Մարզպետին ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագրեր, տեղեկություններ և այլ փաստաթղթեր.
- Մասնակցել Մարզպետի հանձնարարականներով, համապատասխան պլաններով ու ծրագրերով նախատեսված՝ տարածքային կառավարման մակարդակում պաշտպանության ոլորտի Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության իրականացման աշխատանքներին: Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Մարզում տեղակայված զինվորական ստորաբաժանումների հետ մշտապես օպերատիվ կապ ապահովելու ուղղությամբ: Մարզպետին ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագրեր, տեղեկություններ և այլ փաստաթղթեր.
- Ապահովել պետական սահմանի պահպանության գործում Մարզի տարածքում գտնվող սահմանապահ գորքերին աջակցություն ցուցաբերելու համար՝ սահմանապահ գորքերի, տեղական ինքնակառավարման մարմինների, համապատասխան պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, անհրաժեշտության դեպքում նաև սահմանամերձ համայնքների բնակչության և սահմանային գոտում տնտեսական գործունեությամբ զբաղվողների մասնակցությամբ քննարկումներ՝ առաջացած խնդիրների վերացման (կամ նախականիման) և սահմանային ռեժիմի պատշաճ պահպանման

միջոցառումների կազմակերպման ու իրականացման վերաբերյալ.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն.

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

(3.3 կետը փոփ. 27.02.2020թ. N:236 հրաման)

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Բանակցությունների վարում
3. Փոփոխությունների կառավարում
4. Կոնֆլիկտների կառավարում
5. Հասարակության հետ կապերի ապահովում
6. Բողոքների բավարարում
7. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
9. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման

աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: